

ԳԱՄՈՒՆԱՍ ԼՈՒՍԻՏԱՆԱՅԻ ԲԱՆԱՍՏԵՂՆՍ

ՆԻ ԻՐ ԵՐՐՈՐԻ ՀԱՐԻԻՐԵՄԵՍՑ ԴՍՐԱԴԱՐՁՆ

Բորգոզայի Դասսոյին, « քերթողաց իշխանին », ինչպէս որ արդ իր հայրենակիցներն զինքը կը կոչեն, Լուիզ տէ Գամուէնսի պատմութիւնը՝ թերեւ մատենագրութեան տարեգրոց մէջ ամենէն թշուառն է. անոր համար այն հանգէսներն որովք հռչակուեցաւ 'ի Լիսպոնա իր երրորդ հարիւրեմեակը, հեղեական և օտար ընդդիմակ մ'են իր ժամանակաց անտարբերութեանը և զինքը երեսէ թողլուն՝ որով գրեթէ անթուրութենէ մեռաւ : Ինչպէս Հոմերոսի և Քրիստափոր Գոլումպոսի հանդիպեցաւ, որոց ծննդեան փառքը քանի մը քաղաքք յիրերաց յափշտակել կը ջանային, այսպէս ալ Լիսպոնա, Գոյիմպորա և Սանդարէմ, Գամուէնսի ծննդոցը վրայ կը միցէին : Բայց ըստ վկայութեան Մանուէլ տէ Գորրէայի, իրեն մտերիմ բարեկամին, ինքը ծնած է ստուգիւ 'ի 1517 'ի Լիսպոնա, Տօն Մանուէլի թագաւորութեան ժամանակ, թէպէտ ընդ հակառակն ուրիշ շատերն կ'ըսեն որ յամին 1524 աշխարհք եկած ըլլայ :

Իր ցեղը Կալիցիայէն յառաջ եկած էր Գամանան անունով, որ յետոյ 'ի 1370 Գամուէնս փոխուեցաւ, երբոր վաղրոյ Բերէզ Գամանն, ապաւէն փնտռեց 'ի Բորգոզալ իր հայրենեաց մէջ կրած ձախորդութեանց պատճառաւ : Տօն փերտինանտոսի, որ իրեն բազմակերպ բարիքներ ըրաւ, ծառայութեան մէջ մտաւ, և մեռաւ յԱլյուպարօզայի հռչակաւոր պատերազմին մէջ, յորում Բորգոզայցիք մեծ յաղթութիւն մ'ըրին Սպանիացոց վրայ : Իրեն հայրը Ումոն վաղ Գամուէնս և իր մայրը Աննա Մաչետոյ՝ յազնուական ցեղէ էին : Բայց զժրգողաբար

հայրը՝ որնաւապետ էր՝ նաւակոծեցաւ Կոայի ծովափունքը և իրեն հետ մէկտեղ բոլոր ունեցածները կորսուեցան, մինչդեռ Լուդովիկոս դեռ տղայ էր : Սա՝ ժամանակին զրկուեցաւ Գոյիմպորայի համալսարանը, ուր մեծ ջանքով սորվեցաւ գեղեցիկ ուսումներն, պատմութիւն, փիլիսոփայութիւն, և մանաւանդ բնագիտութիւն : Համալսարանին ընթացքը լմննալով, դարձաւ 'ի Լիսպոնա, ուր իբրեւ ազնուական ցեղի մ'երիտասարդ՝ թէ և աղքատ կը յուսար աղէկ վիճակի մը պատահիլ և բարձրաստիճան պաշտօնի մը հասնիլ : Սկսաւ սիրոյ վրայ քանի մը բանաստեղծութիւններ հրատարակել, որոնք Արքունեաց հաճոյ անցան և ազատագրի տիկնանց աչքը իր վրայ դարձնել տուին : Գամուէնս բաց՝ իր հանճարէն՝ նաև մարմնոյ ամեն գեղեցիկ յատկութիւնքն ունէր : աչքերն մեծ, կրակոտ, սիրալիր և զգայական, մազերն խարտեալ, ճակատը լայն և ազնուական, քիթը արժուոյն, վայելուչ բերան մը, շրթունքներն բուստի նման կարմիր, երեսը ճախարակեայ, գոյնն սպիտակկարմիր՝ որ կախարդիչ առողջութիւն մը կ'երևցնէր դէմքին վրայ, միջահասակ բայց վայելուչ, ոչ գէր ոչ վատոյժ, վերջապէս ունէր այն ամեն բանը՝ որ զմարդախորժի կ'ընծայեն առանց ուրիշ որ և է նպաստից : Իրեն այնչափ թէ բնական և թէ մտաւորական ձրիւքն անկարելի էր որ զուրիշ առ ինքն չյանկուցանէր : և իրացնէ սիրեցիկն զինքը մեծաստիճան տիկնայլ, Բայց իրեն համարձակութեամբն՝ Կատարինէ Ալդայիտէ, արքունեաց բամբիշն մը իր ամեն թշուառութեանց պատճառ ե.

ղաւ, այնպէս որ ինչուան 'ի Սանդա-
րէմ արքսորուեցաւ, ուր Լուսիսառք
գիւցազնական մեծ քերթուածոյն գա-
ղափարն ծրագրեց, որ իր համբաւոյն
սկիզբն եղաւ:

Ձանձրանալով այսպիսի տխուր տե-
ղոյ մը մէջ իր օրերն անցընելէն, և այն
իր անհանդարտ հոգւովն, որ չէր թո-
ղուր զինքը երկար ժամանակ յանգու-
րու, միտքը դրաւ Ափրիկէ երթալու,
ուր պատերազմ կար բորդոգալցոց և
Մաւրիտանացոց մէջ: Կամաւոր զի-
նուոր գրուեցաւ և ճիպիղգերայի նե-
ղուցին մէջ նաւական կռուող մը ժամա-
նակ ալ աչքը կորսնցուց, յորում թըշ-
նամուղ նաւու մը վրայ յարձակողաց
առաջիններէն մէկն ըլլալով, մաւրի-
տանացի մը հրացանի հարուածով մը
զինքը զրկեց մէկ աչքէն: Հօն քանի
մը բանաստեղծութիւններ գրեց, որոնց
մէջ նաև նուազ մը Բեղրարգայի ոճոյն
հետևութեամբ, յորում պանչելի կեր-
պով կը ստորագրէ իր 'ի սիրոյ քա-
չած նեղութիւններն' որ թէ ոչ միակ
սակայն զլխաւոր պատճառ էր իր ձա-
խորդութեանց: Յուսալով որ իր քա-
ջութիւններն բաւական եղած են մոռ-
ցընել տալու իր առաջին սխալմունքն,
դարձաւ 'ի Լիսպոն, ուր փոխմասակ
պատերազմի մէջ ըրած իրեն քաջու-
թեանց վարձքն ընդունելու' ինչպէս
որ կը յուսար, այնպիսի տմարդու-
թեանց և չարութեանց հանդիպեցաւ,
որ ստիպուեցաւ առագաստելու յԱ-
րևելս և լքանելու իր ապերախտ հայ-
րենիքը. և երբոր Դակոյ գետէն վար
կ'իջնէր, Սկիպիոն Ափրիկեցոյն գե-
րեզմանին վրայ փորագրած այն ազ-
նուական խօսքերն աղաղակեց. Ա-
պալնո՛րհ հայրենիք, լուսիցիս գոս,
կերս իմ:

Ի 1553 փերտինանտոս Ալփարէզ-
գապրով նաւապետին նաւը մտաւ, և
ուրիշ բաւագոյն կեսիք մը փնտռելու
գնաց 'ի Կոս, ուր հայրը մեռեր էր:
Հնդկաստանի փոխարքայն էր Տոն Ա-
լոնզոյ Ներոնեա, որ նոյն ժամանակը
հրաման տուեր էր զօրաց Բիմանդէի

Թագաւորին վրայ արշաւելու, որ բռնու-
թեամբ տիրեր էր ուրիշ իշխանաց քա-
նի մը կղզիներուն: Գամոէնա ուզեց
մասն ունենալ և զիւցազնաբար կռուե-
ցաւ, այնպէս որ կրցաւ համարձակ
երգել. « Ոչ ոք իմ կրտսերներս տե-
սաւ, ես շատերուն տեսայ: Յաջորդ
տարին ուրիշ արշաւանքի մը մասնա-
կից եղաւ Էմանուէլ տէ վասգոնել-
լոս նաւապետին հետ: Մեքքէի եր-
կրին մէջ, ուր տեսաւ Երվանիկ լեռն
և բոլոր այն Ափրիկէի գեղեցիկանիստ
մասն, որուն վրայ հիանալի նկարա-
գրութիւն մը թողուցած է իր երգերուն
մէկուն մէջ, յորում կ'ողբայ իր թշուա-
ռութիւնքը և յիւր տարփելոյն հետու
ըլլալը:

Բաղդաւոր կ'ըլլար, եթէ Կոս դար-
ձած ժամանակը, գոհ եղած ըլլար իր
սէրը, իր գիւցազնական արարուածքը
և իր ձախորդութիւնքն երգելովը. բայց
երգիծարանութեան ալ ձեռք զարկաւ,
որով նախատեց իշխանութիւններն ալ
Հնդկաստանի յիմարտաքիռն անու-
նով չափէն աւելի համարձակութեամբ
ստորագրեց իր սենսած քանի մը զեղ-
ծմունքներն, անոր համար 'ի Մագաոյ
արքսորուեցաւ, ուր քանի մը տարի ան-
ցուց այնպիսի զբաղանքով՝ որ իրեն
բնաւ սիրելի չէր, այն է վախճանեալ
անձանց ստացուածոցը մատակարար
ըլլալը, մի և նոյն ժամանակ ալ իր
գիւցազներգութեան ետեւ ըլլալով:
Պղտիկ գումար մը ժողովելով, զոր
բաւական կը կարծէր իր առօրեայ ա-
պրուստին համար, և արքսորանքէն ալ
ետ կանչուելով փոխարքայէ մը որ իրեն
բարիքը կ'ուզէր, նաև մտաւ Կոս դառ-
նալու համար. բայց նաւաբեկութեան
մը պատահելով ամենայն ինչ կորսնցուց
բաց 'ի քերթուածէն: Գամոէնա այս
գիպուածն անմահացնել ուզեց իր Լու-
սիատից մետասաններով գրուագին
մէջ, և ժողովողեան բերանը մնաց այս
անասպելը՝ թէ Գամոէնա մէկ ձեռքով
լողալով իր կեանքը կ'ազատէ, միւսովը
իր քերթուածը ջուրերէն վեր բռնե-
լով:

Իր ձախորդութիւնքը վերջին ծայր հասան երբոր Կոստանդին Պրականցա-յի տեղ՝ որ իր բարեկամն էր, յայնորդեց 'ի փոխարքայութեան Ռեոտուա-տոյ կոմսն : Ասոր հազար ամբաստա-նութիւններ տրուեցան բանաստեղծին վրայ՝ իբր թէ իր վերոյիշեալ պաշտա-ման մէջ անհաւատարմութիւնք ըրած ըլլայ : Ռեոտուատոյ ուրիշ բան չկրցաւ ընել բայց եթէ իբր յանցաւոր վնջը բանտ դնել, մանաւանդ որ շատ մը պարտաւեցներ իրենց ձայնը բարձրա-ցուցին : Այս պատիժը՝ Գամինէն տա-րապայման անօրէնութիւն մը համա-րեցաւ, չի կրցաւ համբերել և փոխա-քսյին անուան վրայ դրոյմեց անշնչելի եղեռնութեան տողեր իր երգերուն մէ-կուն մէջ, յորում գուցե . « Ո՛ր էր թէ բռնաւորն որ զիս կ'ընկճէ՝ ամեն տեղ մեծագոյն արհամարհանաց հանդի-պէր. ո՛ր էր թէ ինձի՝ զոհ եղածիս դէմ տուած անօրէն վճիռը՝ յաւիտեան քան-դակեալ մնայ կիճոյ և պղնձի վրայ » :

Վերջապէս շնորհեցաւ իրեն հայրե-նիքը տեսնալ . տասնուհինգ տարի աքսորանքէ վերջը 'ի 1569 'ի Լիսպոնա ոտք դրաւ՝ չունենալով աշխարհային այլ հարստութիւն բայց եթէ իր քեր-թուածն : Միկաւ ամենայն միջոցներ փնտռել զանիկայ հրատարակելու . և ընծայելով զայն Տօն ֆերտինանտու թագաւորին, վարձատրուեցաւ տարե-կան 15000 ռէյիս թոյակով, — որ կ'ընէ գրեթէ 100 ֆրանգ տարին, — այս ալ ամեն անգամ չէր տրուեր : « Յիրաւի, կ'ըսէր ինքը, Բորգոգալ կործանման կ'երթայ, այնպէս որ ես կ'ուզէի խըն-դրել թագաւորէն որ կարենար փոխա-նակել իմ 15000 ռէյիս թոյակս 'ի նոյ-նաթիւ գաւազանի հարուածս՝ իր վար-չութեան պաշտօնէից համար, որոնք բոլոր երկիրն կը կողոպտեն » : Բայց բոլոր երկիրն կը կողոպտեն : Իսկ այս պղտի բաղը երկար պիտի չի տեւեր : Տօն Սեբաստիանոս յԱփրիկէ պատերազմ բանալով, 'ի յաղթող Մաւ-րիտանացւոց կը սպանուի Ալգազարի կռուոյն մէջ. Տօն Հենրիկոս ծեր ծիրա-նաւորն՝ Բորգոգալի գահը կ'ենլէ և կը

գաղութեցընէ Գամինէսի թոշակը : Բան-կարծակի վերջին աղբատութեան մէջ ինկած, կենդանի կը պահուի Ան-տոն անուամբ հաւատարիմ հնդիկ ծա-ռայէ մը, որ փողոցաց մէջ ողորմու-թիւն կը մուրաբ իր տիրոջ համար : Իրեն բանաստեղծութեանց մեծ մասը զոր այս ժամանակներս գրեց, որոնց մէջ իր խեղճութիւնը կը ստորագրէ, աննման օրինակաւ լի են ստոյգ բա-նաստեղծութեամբ : Այնպիսի խորին եղան իր ցաւերն, որ իր մարմնոյն հի-ւանդութիւնքը սաստիկ զայրացան, և ստիպուեցաւ հիւանդանոցն ապա-ւինիլ, ուր նամակի մը մէջ՝ որ իր զը-րուածոց վերջինն եղաւ՝ այս հետեւեալ խօսքերը կը գտնուին . « Արդեօք յը-տառմէ ե երբեք, որ խեղճ անկողնոյ մը վրայ, յետիւն քառասունքեան տե-սալուսի մը վրայ, քաղղն՝ իմիմնե-րուս նման ողբերգական և անողորմ արկահներ անկայացուցած ըլլայ : Ես անոր (քաղղին) հետ կ'ընսնամ՝ իբրեւ թէ ինչպէս իր կատաղութիւնը բաւական չըլլար զիս տապալելու, որովհետեւ այնչափ աղիտից դէմ դնել ուզելն՝ կ'ըլլայ տեսակ մը յաւ-ըղգնութիւն որ յրաւութեան կը փո-խուի » : Հիւանդանոցին անկողնոյն վրայ, լսելով Ալգազար- փոփոխի ձա-խող ելլէն, — ուր Սեբաստիանոս թա-գաւորն Ափրիկէի Մաւրիտանացիներէն մեռաւ 'ի 1578, — լսելով Բորգո-գալի ձախորդութիւնքը որ օտարին իշ-խանութեան և հարստութեան ձեռքն կ'ինկնար, անօթութենէ սպառեալ, օրհասական աղաղակեց . « Երբանիկ կը մեռնիմ, մեռնելով հայրենեացս ծոցը, և հետը մէկտեղ կը մեռնիմ » : Յետ քանի մը անսուղաղութեան ամառո՝ մեռաւ 62 տարեկան : Առանց չըյ թա-ղուեցաւ Ս. Աննայի եկեղեցւոյն մէջ, զրան մօտ ձախակողմը, և իր գերեզ-մանին վրայ այս հետեւեալ վերտառու-թիւնը գրուեցաւ .

Հօս կը հանդիլ լուգովկոս տէ Գամինէս
Պարագլուխն ժամանակակից բանաստեղծից

Աղբատ ապրեցաւ և ողորմելի
Այնպէս ալ մեռաւ յամին 1579 :

Ժամանակաւ յետոյ իրեն վրայ լա-
տիններէն լեզուով գեղեցիկ արձանա-
գրութիւններ գրուեցան . յորս առա-
ւելապէս հռչակաւոր են Տօն Մանուէլ
տէ Սուգա Գոնդինօյին և Մատթէոս
տէ Գորտոզա յիսուսեանին : Տ. Դասսոյ,
Լոռիաւորքը հրատարակուելէն վերջը,
և իր Երուսաղէմ Ազատեալ քերթուա-
ծը 'ի լոյս ընծայելէն յառաջ, նուազ մը
շարագրեց 'ի պատիւ Գամինի :

Լոռիաւորքը՝ իր անմահ քերթուա-
ծոյն նիւթն, որուն համար գործածեց
արիոստական ութտողեանը, չնդկաս-
տանին գիւտն է վաւրոյ կամայի ձեռ-
քով, որ հասնելով 'ի Մէլինտա, հօնտե-
ղի թագաւորին գաղափար մը կու տայ
Եւրոպիոյ վրայ, և Բորգուզալի պատ-
մութեան զլխաւոր դէպքերն կը պատ-
մէ բանաստեղծօրէն, լմնցնելով քեր-
թուածն այն մեծ աշխարհադիտողին
դարձողն 'ի Բորգուզալ յետ ուրիշ շատ
պատահարաց : Քերթուածը լի է աշ-
խուժիւ, հայրենասիրութեամբ, մեծ
երեւակայութեամբ և յանդուգն նկարա-
գրութեամբ, որուն համար իրաւամբք
ըսած է հնդինակ մը, « միակ արդի
դիւցազնական քերթուածն է՝ որստու-
գիւ հին դիւցազներգութեանց դրոշմն
կրէ թէ հայրենասիրական և թէ ժողո-
վրդական ոգւով » . ճեմելիք մ'է վի-
պասանական պատկերաց, յորում կը
ներկայանան Բորգուզալցոց դիւցա-
զնական գործերն :

Բաց 'ի Լոռիաւորք' գրեց Գամինս
գէղոններ, հովուներգութիւններ, ե-
ղերներգութիւններ, նուագներ, վեց-
տողեան քերթուածներ, երգեր, վեր-
տառութիւններ, երգիծարանութիւն-
ներ, և երեք կատակերգութիւն յոր-
ջորջեալ . Տարիաւը ֆիլոսոֆիայի,
Ամփիտրիոն, և Արքայն Սելեկոս :
Լոռիաւորք գեղեցիկ կտորներն քըն-
նադատք զասոնք կը համարին . Էկաս
Մոնիգի մահուան հարկին յիշատակը .
Ուրիշի ճակատամարտին նկարագրու-
թիւնը . Սպանիոյ թագուհւոյն Մարիա-
մայ այցելութիւնն առ հայրն՝ թագա-
ւորն Բորգուզալի, օգնութիւն խնդրե-
լու իր երկանը համար ընդդէմ Մաւ-
րիտանացոց պատերազմին մէջ . Ինէս
տէ Գասդրոյի ողբերգական մահը .
Ալյուպարօղի արիւնահեղ կռուոյն նը-
կարագիրն . ամենէն մեծ յաղթութիւնն
զոր ըրեր են Բորգուզալցիք Գասդիլիո-
նացոց վրայ :

Այս տարիս իր երրորդ հարիւրա-
մեայ դարադարձն կատարելու առնել
'ի պատիւ բանաստեղծին, ուղեցին նաև
այն մեծ աշխարհադիտողին՝ զոր ինքն
անմահացուց յիշատակը կատարել :
Գամինսի և վաւրոյ կամայի նշխարք-
ներն մեծ և անսովոր հանդիսիւ ի'
յուշիս 9 'ի Պէլէմ բերուեցան : Տաճա-
րին մէջ եղած փառաւոր հանգիսին
ներկայ գտնուեցան թագաւորն և թա-
գուհին : Բոլոր Լիսպօնայի մէջ իբրև ազ-
գային տօնի մ'օր հռչակուեցաւ այն
օրը :